

*
* * *

Ինչպէս յիշեցինք՝ Օրագրութեան մեր քով զըտ-
նուած միակ օրինակը նոյնինքն հեղինակին՝ Երեմիա
Չէլէպլի գրչէն ելած է, զոր Սուրբ Աթոռիս նուիրած
է յայտնի գրավաճառ Յարութիւն Մարգարեան, ի յի-
շատակ 1847 Սեպտեմբեր 2ին Կ. Պոլսոյ մէջ վախճա-
նած իր հօր՝ գրավաճառ Մարգարի։ Թէ ի՛նչ պարա-
զաներու տակ, ե՛րբ և որո՛ւ միջոցաւ եղած է սոյն
նուէրը՝ անծանօթ կը մնան մեզ։ Յամենայն գէպս ա-
նիկա նուիրուած է 1872էն վերջ, վասնզի Ղեւոնդ
վրդ. Փիրզալէմեան Կ. Պոլսոյ մէջ յիշատակագրու-
թիւն մը ձգած է ձեռագրին մէջ 1872 Ապրիլ 2 թուա-
կանով։

Տըթոր Թորգոմեանի Ասամպօլոյ Պասմութեան Ծա-
նօթագրութեանց մէջ (էջ 372-75) կայ հետեւեալ շա-
հեկան տեղեկութիւնը։ 1855ին Կ. Պոլիս հրատարա-
կուած Աստիկ Արեւելեան օրագրին մէջ (Ա. Տարի, 1
Մայիս, էջ 75-78) Ազգային Յիւսակարան վերնագրին
տակ կ'երևի բնագրական հատուած մը՝ նկարագրող
Սիսի Թորոս կաթողիկոսի մահը եւ յուզարկաւորու-
թիւնը, որ տեղի ունեցած է Կ. Պոլսոյ մէջ ՌՃԶ (= 1657)
տարուան Ապրիլ 29ին։ Նոյն թերթի կողմէ
գրուած Յառաջաբանին մէջ ըսուած է. «Լանկայու
Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ (որ այժմ անծանօթ եղած
տուն մըն է) դպրութիւն ընող տասնեւերկու տարեկան
հացագործ տղայ մը Սուլթան Իպրահիմայ վերջին տա-
րիներէն սկսելով մինչև Դ. Սուլթան Մէհմէմէտի չո-
րեքտասաներորդ տարին, իւր կենդանութեան ատենը
Կ. Պոլսոյ մէջ պատահած գէպքերը ի գիր արձանա-
ցուցած ըլլալով՝ երկարօրէն կը յիշատակէ, որուն
բուն ձեռագիրը Սամաթիոյ Ս. Սահակեան քանգարանին
մէջ անեղծանելի կեցած է, ուրկէ թանգարանին վե-